ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"26" .....09..... 2022թ. N.....2732-Ա

ՀՐԱՄԱՆ

ԱԶԴԱԿԻՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻՆ ՈՒ ԱԶԴԱԿԻՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ ՆԵՐԱՌՈՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻՆ ՎՃԱՐՎԱԾ ՌՈՅԱԼԹԻՆԵՐԻՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՕ-137 օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասը և ««Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» 2022 թվականի մարտի 4-ի թիվ ՀՕ-52-Ն օրենքի 2-րդ հոդվածը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել ազդակիր բնակավայրերին ու ազդակիր բնակավայրեր ներառող համայնքներին համայնքային մասհանումների բաշխման ձևը՝ համաձայն Հավելվածի:

2. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ֆինանսական, հաշվապահական հաշվառման և համայնքային բյուջեների վարչության պետին՝ սույն հրամանն ընդունվելուց հետո մեկամսյա ժամկետում կատարել 2021 թվականին վճարված ռոյալթիներից ազդակիր բնակավայրերին ու ազդակիր բնակավայրեր ներառող համայնքներին համայնքային մասհանումների բաշխումը՝ հրամանի 1-ին կետով հաստատված ձևին համապատասխան և հատկացվող գումարների չափի մասին տեղեկացնել համապատասխան մարզպետների աշխատակազմերին:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի ընդերքօգտագործման ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

9/26/2022

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: SANOSYAN GNEL 1710830069 **Գ. ՍԱՆՈՍՅԱՆ**

ք. Երևան

Հավելված

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների

նախարարի 2022 թվականի

26.09 -ի N 2432-Ա հրամանի

ՁԵՎ

ԱԶԴԱԿԻՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻՆ ՈՒ ԱԶԴԱԿԻՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ ՆԵՐԱՌՈՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ

Հ/Հ	Ընդերքօգտագործող կազմակերպության անվանումը	Ազդակիր բնակավայրեր ներառող համայնքը	Ազդակիր բնակավայրի անվանումը	Վճարված ռոյալթին՝ ՀՀ դրամ (ըստ՝ ՊԵԿ տվյալների)	Ազդակիր բնակավայրերին հավասարապես բաշխման ենթակա ընդհանուր ռոյալթիի չափ	Ազդակիր բնակավայրեր ներառող համայնքներին հավասարաչափ բաշխման ենթակա ռոյալթիի չափ	Ազդակիր բնակավայրին բաշխված ռոյալթիի չափ	Ազդակիր բնակավայրեր ներառող համայնքին բաշխված ռոյալթիի չափ
1	2	3	4	5	6	7	8	9
ՀՀ մարզը								
1								
2								
3								